

ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՐԻ ԾԱՅՐԻՆ

Շրջափակման մասին թերթի անցած համարներում տպագրված նյութերն ինձ անակնկալի չբերեցին, այլ ճակատս պատեցին ազգային արժանապատվության վիրավորանքից ծնված ամոթի քրտինքով: Դրամատիկ վիճակների մեջ ամենածանրը, կարծում եմ, անզորության զգացումն է: Մեր հարևան բաշիբոզուկներն օրեցօր ավելի են լկտիանում ու դառնում առավել ագրեսիվ՝ հենց այս փաստից ելնելով՝ որևէ դիմադրության չհանդիպելով, նման դիմադրության հնարավորությունն անգամ չակնկալելով: Բայց իրականում վիճակն այդպես չէ, իրականում մենք կարող ենք խուժանին զսպաշապիկ հագցնել՝ գոնե նրա իսկ թելադրած ու գործադրած միջոցներով: Մինչև ե՞րբ պիտի հանդուրժենք Ադրբեջանին պատանդ մնալու վիճակը, ինչքա՞ն պահպանենք քաղաքակիրթ ասպետի կեցվածքը, երբ նախամարդու բնազդներով ղեկավարվող հակառակորդը ոչընչի առջև կանգ չի առնում: Դեռ հավատո՞ւմ ենք, որ գըտնըվում ենք մեր անվտանգությունն ապահովող պատվարի հովանու տակ: 70 տարի շարունակ մեր աշխարհասասան տերությունը սուր է բարձրացնում՝ ի պաշտպանություն մեծ ու փոքր ճնշված ժողովուրդների, իհարկե, երկրագնդի մեկ վեցերորդ մասից այն կողմ: Եվ այդ վարքագիծը համարվել է լենինյան սկզբունքներից բխող քաղաքականություն: Բայց պարզվում է, որ նման քաղաքականությունը լոկ մեր մենաշնորհն է, որ բոլոր պետությունները միայն ճնշող են ու ագրեսիվ, մեզնից բացի: Իսկ եթե հսկայածավալ երկրում ավազակային խմբերը բռնադատում են մեկ այլ ժողովրդի իրավունքները, ապա վերջինիս պաշտպանությանը ուղղված ձայնը դրսից սառը պատերազմի վերապրուկ է:

Ադրբեջանցիները նորից փակել են երկաթուղին, նորից մտել են մեր գնացքներն ու ֆիզիկական բռնություն կատարել հայերի դեմ: Գրեթե ամեն օր Արցախում և սահմանամերձ վայրերում հոսում է անմեղ հայի արյունը, այն հայի, որն այս պետությանը ծառայել է հավատարմությամբ, անձնազոհությամբ: Բայց այսօր, քաղաքացիական կոիվներում, Հայրենական պատերազմում և ամենուր հայերից անհամեմատ քիչ ավանդ ներդրած ադրբեջանցիներն ըստ էության ավելի բարձր են գնահատվում և բացահայտ հովանավորվում են նույն երկրի ղեկավար մարմինների կողմից:

Ուրիշ ճանապարհ չի մնում, բացի ինքնապաշտպանության բազմազան միջոցներին ապավինելը: Ազնվազարմ թույլ մեղուն անգամ իր կյանքի գնով զգացնել է տալիս իր գոյության իրավունքի փաստը: Լուսահոգի հորեղբայրս՝ քաջակորով սասունցի մի մարդ, երեխաներին խրատում էր՝ շառից հեռու մնացեք, բայց երբ այն զոռով գալիս ու քեզ է կըպչում, առաջին հարվածը հորդ էլ չզիջես, թե չէ էս աշխարհում քո ապրելը կդառնա ավելորդ:

Այսօր պետք է նման գիտակցությամբ ղեկավարվեն բոլորը, հստակ վարքագիծ մըշակեն կոնկրետ գործողությունների համար: Համբերությունը, երբ սահմանն անցնում է, փոխարկվում է ստրկամտության: Իսկ մենք հազարամյակներով ենք ապացուցել հակառակը:

Լեռնային Ղարաբաղի պըրոբլեմի կարգավորման վերաբերյալ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նոյեմբերի 28-ի որոշումը վերջնականապես ցըրեց մեր բոլոր պատրանքները: Ադրբեջանի ծայրահեղականները՝ հանրապետության պետական մարմինների գործուն մասնակցությամբ, համոզված եմ, նաև Մոսկվայի գերագույն իշխանությունների համաձայնությամբ, ավելի խըստացրել են շրջափակումը:

«Խորհրդային Հայաստան» թերթում երեկ հրապարակված հարցազրույցը՝ ՀԿԿ Գորիսի շրջկոմի առաջին քարտուղար Ռոբերտ Ալեքսանյանի հետ, կրկին ապացուցեց, որ ԽՍՀՄ ՆԳ զորամիավորումներն ու Կովկասի արյունարբու թաթարների ավազակաբարո «սև բլուզավորները» նույն բանակի ջոկատներն են: Այդ հարցազրույցն ընթերցելիս հիշեցի քուրդ հրոսակների խժդժություններն ու նրանց զսպելու անվան տակ հայկական գավառներն ուղարկված սուլթանական զորքերի գազանությունների մասին փաստերը: Ժամանակներն ու անվանումներն են փոխվել, մնացած ամեն ինչ անփոփոխ է:

Ես այլևս չեմ հավատում երկրաշարժի հետևանքները վերացնելու համար կենտրոնական իշխանությունների պատրաստակամության մասին պնդումներին: Հակառակ դեպքում ու՞մ սադրանքով է, որ Հայաստանի աղետյալներին արտասահմանից ուղարկված միլիոնավոր դոլարների արժեքության բժշկական սարքավորումները կորչում կամ թալանվում են դեռ Հայաստան չհասած: Հայոց հարուստ լեզուն համարժեք բառեր և արտահայտություններ ունի՞ նման «մարդասիրությունը» գնահատելու կամ բնորոշելու համար: Տեսա՞ք հեռուստատեսային ռեպորտաժը, թե ինչպես էին իտալական փրկարարները մեր երկրի պրեզիդենտին շնորհակալություն հայտնում այն մեծ մարդասիրության համար, որ թույլ տվել հայ աղետյալներին հաձել փլատակների տակից: Թույլ էր տրվել «վերակառուցումը» պրոպագանդելու համար: Միայն պրոպագանդելու, այլապես այսօր չէր հովանավորվի Լեռնային Ղարաբաղի ու Հայաստանի վայրենաբարո շրջափակումը: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի տխրահռչակ որոշման պարունակած հավաստիացումներին ի հեճուկս:

Մեզ համար ամեն ինչ հըստակացել է, միայն ոչ էական մի անորոշություն է մնացել. ո՞վ է ում ձեռքին գործիք, Ադրբեջանի ազգային ճակա՞տը կենտրոնական իշխանությունների, թե՞ հակառակը:

Խաչիկ ՄԽԻԹԱՐՅԱՆ